պես պարզ և այն ընդլայնելու ,,բարեկամ,, հասկացությամբ, որը մինչև այժմ էլ կա հայերենում, բայց ստացել է խոսակցական-ընտանեվարի երանգ:

ՆՎԱՐԴ ՔՈՉԱՐ

## ՀԱՅԵՐԻ ՏԵՂԸ ԱՌԱՋԱՎՈՐ ԱՍԻԱՅԻ ԵՎ ԿՈՎԿԱՍԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԵՋ՝ ԸՍՏ ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ

1. Ինչպես պարզվեց ծեռնա-մաշկային ռելիեֆի ուսումնասիրություններից, հայերը բնութագրվում են այն գծերի առավելագույն արտահայտվածությամբ, որոնք բնորոշ են հարավային եվրոպեոիդներին, առանց որևէ այլ ռասայական խառնուրդների: Այդ նշանների համալիրը բարձրագույն արտահայտչականության է հասնում կովկասիոն և առաջավորասիական լոկալ ռասաներում:

2. Հիշյալ տվյալներից ելնելով, ուշագրավ է թվում հայերի բաղդատումն Առաջավոր Ասիայի և Կովկասի մի շարք ժողովուրդների հետ մի հատուկ մեթոդով, որը կոչվում է ,,ընդհանրացված գենետիկական տարածությունների,, մեթոդ, որն այդ արեալի ժողովուրդների դիֆերենցիացիայի չափանիշն է:

3. Ինչպես պարզվեց հաշվարկումներից, այդ մեթոդով թվարկած բոլոր ժողովուրդները բավականին մոտ են միմյանց: Հայերին առավել մերձ են օսերն ու հարավային վրացիների խմբերը և Հյուսիսային Կովկասի մի շարք ժողովուրդներ: Իսկ ամենահեռու ընկածները միթվալիներն ու սվաններն են: Այդ մեթովով ժողովուրդների մերձավորությունները համադրելու համար հաշվել ենք նաև գենետիկ տարածությունը հայերի և յակուտների միջև, որը գրեթե հասել է մեկ միավորի և ցույց է տալիս ծայրահեղ հեռավորություն:

4. Առաջավոր Ասիայի և Կովկասի ժողովուրդների ծեռնափերի մաշկաքանդակային ակնհայտ նմանությունը հավաստում է տվյալ բնատարածքների հին եվրոպեոիդ բնակչության ընդհանուր ծագումը: Նշանների այդ համալիրը կարող էր պահպանվել ռասայական մեկուսացման պայմաններում՝ սկսած նեոլիթի և բրոնզի դարերից, երբ նեղերես ու երկարագլուխ բնակչությունը բանակապես ճնշող մեծամասնություն էր կազմում:

ՌՈՒԲԵՆ ՕՀԱՆՋԱՆՅԱՆ

## ,,ԷԹՆԻԿ ՆԱԽԱՊԱՇԱՐՄՈՒՆՔ,, ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Արևմուտքի սոցիալական գիտությունների բառապաշարում լայնորեն օգտագործվող ,,էթնիկ նախապաշարմունք,, տերմինը դասվում է էթնիկ հարա-